

ԺԱՄԱՍՎԱԿԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ ՆԵՅՐՈՂԵԳԵՆԵՐԱՏԻՎ ԱԽՏԱՎԱՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԵԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լ. Ն. ԱՌԱՋԵԼՅԱՆ

Կենսարամակամ գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊԴ պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Դ. Բուլիարյանի անվան կենսարիմիայի ինստիտուտ

Ա. Յ. ՎԻՐԱԲԵՅԱՆ

ԳՊԴ կենսարամության բաժնի Խ կուրսի ուսանողուհի,
ԳՊԴ կենսարամության, Էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոն
Մ. Գ. ԱՌԵՎԱՏՅԱՆ

ԳՊԴ կենսարամության բաժնի Խ կուրսի ուսանողուհի,
ԳՊԴ կենսարամության, Էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոն

Վերջին տասնամյակների ընթացքում զգալիորեն շատացել են նեյրոդե-
գեներատիվ հիվանդությունների նորութիվական և ախտահամալիրային
դրսևորումները: Դրանց թվին, առաջին հերթին, պատկանում են անօբային
թուլամտությունները, որի հիմքում ընկած է գլխուղեղի արտերիոսկլերոտիկ ախ-
տահարումը, Ալցիենմերի (ԱՅ), Պարկինսոնի (ՊՇ), Շենտինգտոնի (ՇՇ) հիվան-
դությունները, Շիզոֆրենիան (ՇՖ) իր մի շարք նմանատիպ ատիպիկ ձևերով:
Չնայած ինունահիստորիմիական, ռետգենակառուցվածքային և այլ մեթոդնե-
րի բուռն զարգացմանը, հիվանդության վերջնական ախտորոշումը կատար-
վում է գլխուղեղի տարբեր բաժինների նեյրոհումրալ պրոցեսների ուսումնա-
սիրման և նրա գործունեության հիմքում ընկած մեխանիզմները պարզաբանե-
լու շնորհիվ:

Նեյրոդեգեներատիվ հիվանդությունների ախտաբանության դրսևորում-
ների վերաբերյալ տարածում են զտել շատ տեսակետներ: Այս աշխատանքի
նպատակն է ցույց տալ վերը նշված հիվանդությունների առաջացումը նեյրո-
քիմիական պրոցեսների ախտահարումնով՝ կատեխոլամինային տեսությունը,
որը առաջարկել են ամերիկյան հոգեբուժներ Շիլդկրաուտը և Թիտին:

Ինչպես հայտնի է, նյարդային համակարգի բազմապիսի գործունեությու-
նը, այդ թվում նյարդային կենտրոնների գործունեությունն իրականացվում է
երկու հիմնական պրոցեսներով՝ դրդման և արգելակման, որոնք անմիջական
կապ ունեն սինապսային հաղորդականության հետ: Նյարդային բջիջներում
(նեյրոններում) կատարվող փոփոխություններն անմիջապես անդրադառնում
են գլխուղեղի ֆունկցիայի վրա: Նեյրոնի հետ է կապված մտածողության պրո-

ցեսը, մարդկանց հոգեկան գործունեությունը: Նեյրոնները միմյանց հետ հաղորդակցվում են սինապսների միջոցով: Սինապսներում գոյություն ունեն միջնորդանյութեր, որոնց միջոցով նյարդային համակարգում իրագործվում են միջբջջային հաղորդակցվող փոխազդեցությունները: Այսինքն՝ մեր հույզերի, սիրահարվածության, սովորության, քնի, պահվածքի նողելավորման, լավ տրամադրության, արտաքին ազդակներից պաշտպանվելու համար պատասխանատու են միջնորդանյութերը (նեյրոնների աշխատառությունները): Միջնորդանյութերը ցածրամուկուլային միացություններ են, մասնակցում են մեկ նյարդաքչից դեպի մյուսը ազդակի փոխանցմանը և այդ փոխանցումը կատարվում է քիմիական սինապսներում համապատասխան ընկալիչների մասնակցությամբ: Միջնորդանյութերն են կատեխոլամինները (դոֆամինը, նորադրենալինը), նեյրոակտիվ ամինաթրուները (գլուտամինաթթուն, ԳԱԿԹ-ն), սերոտոնինը, գլիցինը, ացետիլեսոլինը և այլն:


Պարկինսոնիզմը նեյրոդեգեներատիվ հիվանդություն է, որը բնորոշվում է միջին ուլեղի և այլ հաճգույցների դեգեներացիայով: ՊՅ-ն առաջին անգամ նկարագրվել է բրիտանացի բժիշկ Ջեյմս Պարկինսոնի կողմից 1817 թվականին: 60 տարի անց ֆրանսիացի նյարդաբան Ժան Մարտեն Շարլոն, լիովին գնահատելով այդ աշխատանքի արժեքավորությունը, անվանել է հիվանդությունը նրա անունով: Հետագայում, իիմնվելով պարանատումիական տվյալների վրա, ենթադրություն արվեց ՊՅ պարոգենեզում սև նյութի դերի մասին: 1860-ականներին հայտնաբերվեց ՊՅ քիմիական սուրստրատը՝ դոֆամինը և նրա դեֆիցիտը: ՊՅ-ի ժամանակ դոֆամիներգիկ նեյրոնների մահը նախորդում է շարժողական սինպտոմների առաջացմանը առնվազն 4-6 տարով: Պարկինսոնիզմի կլինիկորեն ի հայտ գալու պահին նկատվում է սև նյութում այդ բջիջների մոտ 70%-ի կորուս և ստրիատոնում դոֆամինի քանակի իջեցում մոտ 80% (նորմայի հետ համեմատած): Նրա միջանկյալ մետաբոլիտը L-ԴՈՖԱ-ն է: Այս հիվանդության բուժման համար 1960-ական թվականներին առաջին անգամ նշանակվեց L-ԴՈՖԱ՝ դաշնալով նրա բուժման «ոսկե ստանդարտը»: Բուժման համար օգտագործում են նաև դոֆամինային ագոնիստներ, որոնք ապահովում են դոֆամինային ռեցեպտորների երկարատև դրույմ (ստիմուլացիա):

ՊՅ-ին բնորոշ են հանգստի դողը, որը ՊՅ առաջին սինպտոմն է 70%-ի դեպքերում: Առաջին հերթին ընդգրկում է վերջույթների դիստալ հատվածները: Հանգստի դողը պակասում է շարժման ժամանակ, ուժեղանում՝ քայլելու, սթրեսի ժամանակ:

Գենետիկորեն **ՊՀ-ի** բոլոր դեպքերի մոտ 5-10%-ը ունեն ընտանեկան բնույթ: **ՊՀ-ի** առաջացման, ծերացման վարկածն առաջարկվել է հիմնվելով այն փաստի վրա, որ հիվանդությունը հաճախակի է հանդիպում տարեց մարդկանց մոտ: Ենթադրություն է արվել, որ **ՊՀ-ն** հանդիսանում է ծերացման արագացած ձև և կյանքի ընթացքում սև նյութի որոշակի սուր էկզոդեն և էնդոզեն վնասումները հյուծում են այն՝ բերելով հիվանդության զարգացմանը ավելի մեծ տարիքում, սովորաբար 60 տարեկանից հետո:

Ալցիեմենտը նեյրոդեգեներատիվ հիվանդություն է, որը բնորոշվում է կողմիտիվ ֆունկցիաների, մասնավորապես հիշողության, բանականության հարածուն իջեցումով և առաջացնում է տոտալ թուլամտություն բարձրագույն կեղևային ֆունկցիաների (խոսք, պրաքսիս) արտահայտված խանգարումներով:

ԱՅ-ով տառապում են տղամարդկանց 2,5-10%-ը, իսկ կանանց՝ 3,6-11,2%-ը: Կարծիք կա, որ **ԱՅ-ն** պայմանավորված է որոշ մետաղների նյութափոխանակման խանգարումներով, մասնավորապես՝ այսումինով: Սակայն պարզվել է, որ այդ մետաղի քանակի ավելացումը կրում է երկրորդային բնույթ և թուլամտության հետ ուղղակի կապ չունի: **ԱՅ-ն** ներկայումս ախտահարում է միլիոնավոր մարդկանց, հատկապես տնտեսապես զարգացած երկրներում: Համաձայն մեկ այլ տեսության հիվանդությունը ուղեկցվում է ենթակեղևային նեյրոնների դեգեներացիայով, որտեղ կարևոր դեր ունեն խոլիներգիկ ուղիները, իսկ այս ուղիները որոշիչ դեր ունեն հիշողության համար: **ԱՅ-ն**, որը կոչվում է նաև ծերունական թուլամտություն, ուղեկցվում է մեծաքանակ նեյրոնների դեմենցիայով և ացետիլետինի սինթեզի նվազմամբ: Առաջանում են սպիտակուցային կուտակումներ՝ β-ամիլիոններ նեյրոնների և նյարդավերջույթների մակերեսին, որոնք խորը ախտահարում են հիշելու ունակությունը: Գիտնականները նաև հայտնաբերել են, որ պրիոնային սպիտակուցներն ակտիվացնում են դեմենցիան, որի ընթացքում β-ամիլիոնային պեպտիդներն առաջացնում են խցաններ գլխուղեղում, կաչելով պրիոնին, որի արդյունքում վնասում են գլխուղեղի բջիջները:



healthy
brain

advanced
alzheimer's

Նկար 1

1. Պարկինսոնիզմի հիմնական հաճախտամիջները
2. Ալցիեյմերի հիվանդության դեմենցիան գլխուղեղում

Նկար 2

Դեմենցիան հիվանդությունը նախածերունական թուլամտության տեսակ է: Այս հիվանդությունը դեռևս 1872 թ. նկարագրել է Զորջ Շենտինգտոնը: Շետագա ուսումնասիրությունները պարզել են, որ այն հանդիպում է շատ երկրներում, բայց մեծ տարածում չունի: Հիվանդության մորֆոլոգիական փոփոխություններն արտահայտվում են ճակատային բլթերի, պոչավոր մարմնի դեգեներացիայով (ատրոֆիայով), նեյրոնների զանգվածային կորուստով: Սա ժառանգական հիվանդություն է, որը փոխանցվում է առոտոսմ դոմինանտ եղանակով: Ախտահարվում է զամնա-ամինակարազաքարթքի կենսասինթեզը և աճում է դոֆամինի խտությունը հիմային հանգույցներում: Կատարվում է նեյրոնների դեգեներացիա ուղղությունում՝ որոշակի հատվածներում: Հիվանդության առաջին նշանները, սովորաբար, երևան են զալիս 25-50 տարեկանուն, մեծ մասամբ՝ մինչև 40 տարեկանը, առանց սեռային տարրերության: Հոգեախտաբանական և նյարդաբանական դրսնորումների միջև, սովորաբար, մի քանի տարի է ընկած: ՀՅ վաղ ախտամիջներ են խորեածն շարժումները՝ պայմանավորված դեմքի, ծեռքի, ուսերի մկանների հանկարծակի ծգվածությամբ: Անոնալ շարժումների տարածման արդյունքում, վերջիվերջո, հիվանդները չեն կարողանում խոսել, գրել, անգամ նստել: Հիշողությունն ավելի քիչ է ախտահարվում, քան մյուս կողմիտիվ ֆունկցիաները:

Շիզոֆրենիան խրոնիկական հիվանդություն է, որը ունի նոպայածն կամ հարածուն ընթացք և դրսնորվում է անձի հետզիեսե զարգացող փոփոխություններով՝ էներգետիկ պոտենցիալի անկումով, հույզերի աղքատացումով, խորացող ինքնամփոփությամբ (առոտիզմ), ինչպես նաև բազմազան հոգեախտաբանական խանգարումներով, որի ծանրության աստիճանը պայմանավոր-

ված է այդ փոփոխությունների խորությամբ՝ հոգեկան գործունեության հազիվ նկատելի խանգարումներից մինչև խոր կազմալուծում: Շիզոֆրենիան հանգում է էնրոգեն հիվանդություն, քանի որ նրա պատճառագիտության և ախտածագման մեջ վճռական դեր են խաղում ներքին մեխանիզմները: Այն սկսվում է գերազանցապես երիտասարդ տարիքում (17-25 տարեկանում), սակայն կարող է դրսորվել նաև երիխանների և տարեց մարդկանց մոտ:

Առանձնացնում են շիզոֆրենիայի ընթացքի երեք հիմնական ձև՝ անընդհատ (չընդմիջվող), նոպայածն-հարածուն (շուրանման, այսինքն՝ նոպաներով ընթացող) և պարբերական: Գոյություն ունեն տասնյակ տեսություններ շիզոֆրենիայի առաջացման և զարգացման մասին: Ծագումնաբանական տեսության համաձայն, որը հիմնված է շիզոֆրենիայով հիվանդների ժառանգականության կլինիկավիճակագրական ուսումնասիրության վրա, ժառանգական գործնի դերը կասկած չի հարուցում:

Գոյություն ունի շիզոֆրենիայի հասարակ ձևի երկու տարբերակ՝ նկրոգանման, երբ գերակշռում են նկրոտիկ համախտանիշները և պսիխոպարանման, երբ առկա են պսիխոպարանման ախտանիշներ:

Իմունաբանության զարգացման հետ առաջ քաշվեց «առւտո իմունացման» տեսությունը, որի համաձայն ուղեղային հյուսվածքն ալերգենի բնույթ է ծեռօք բերում, այսինքն՝ օրգանիզմը սեփական հյուսվածքների, մասնավորապես ուղեղի հյուսվածքների հակածինների դեմ հակամարմիններ է սինթեզում: Այս հակամարմինները կարող են վճասել ուղեղի հյուսվածքները:

Շիզոֆրենիայի ախտորոշումը, նրա սահմանազատումը այլ հիվանդություններից զգալի դժվարություններ է ներկայացնում ինչպես հիվանդության սկզբնական փուլում, երբ ախտանշաններն ել այնքան արտահայտված չեն, այնպես էլ ծավակած պատկերի դեպքում, երբ հոգեախտաբանական խանգարումները բավականին նման են նյարդահոգեկան այլ հիվանդությունների ժամանակ հանդիպող փոփոխություններին: Շիզոֆրենիան անհրաժեշտ է ախտորոշել ոչ թե որոշակի ախտանիշներ առանձնացնելով, այլ հիմնվելով շիզոֆրենիայի նեգատիվ ախտանշանների վրա, որոնցով ձևավորվում է հենց սկզբնական փուլում առաջացած այդ հիվանդությանը բնորոշ հոգեկան դեֆեկտը: Շիզոֆրենիայի բուժումը հիմնականում անց է կացվում պսիխոտրոպ միջոցներով՝ հիմնականում կիրառում են ներոլիտիկներ (հալոպերիդոլ, տրիֆտազին և այլն), որոնք բավականին գործուն ազդեցություն են թողնում շաղթողական գրգռվածությամբ, ազրեսիվ գործողություններով, աֆեկտիվ լարվածությամբ ընթացող սուր պսիխոտիկ վիճակների ժամանակ: Անհրաժեշտության դեպքում կիրառում են նաև հակադեպրեսանտներ:

Ներկայումս էթիոլոգիական վերը նշված նեյրոդեգեներատիվ ախտահարումների ամենաակտուալ գործոն է համարվում ժառանգականությունը և կենսաբանական մոտեցումը, որ ուղեղի նորմալ ֆունկցիաները, ինչպես և նրա ախտահարումները ինչքան էլ բարդ լինեն, կարելի է բացատրել նեյրոնների և նեյրոնային ցանցի համագործակցման հիմքով, քիմիական պրոցեսների միջոցով: Եվ հասկանալի է, որ նեյրոֆինիական հետազոտությունները կապված են մարդու ուղեղի խորը իմացության հետ և բնականաբար, հայտնաբերման տարբերություններ առողջ ուղեղի և տարբեր հիվանդություններով ախտահարված ուղեղի միջև:

Բանալի բառեր – նեյրոդեգեներատիվ հիվանդություններ, նեյրոն շիզոֆրենիա, Ալցիեմեր, Պարկինսոն, Քենսոնգտոն

Գրականություն

1. **Блум Ф.,** Хофстедтер Л. Мозг, разум и поведение, 1988, 198-245,
2. Нейрохимия,(под редакцией Ашмарина И. и др.) Москва, 1996, 423-438,
3. Յակոբյան Ն., Յակոբյան Ա., Բարձրագույն նյարդային (հոգեկան) գործունեություն, Երևան, 2005,
4. Մկրտչյան Լ., Կարայան Ն., Մանրիկյան Մ., Եմկոյան Կ., Սաղմնային պրոտեոգլիկանները և նեյրոդեգեներատիվ ախտահարությունը: Առօղջապահություն, 2009, 1, 3-5:

СОВРЕМЕННЫЕ ДАННЫЕ НЕЙРОДЕГЕНЕРАТИВНОЙ ПАТОЛОГИИ

Л. Н. АРАКЕЛЯН

Кандидат биологических наук, доцент, профессор ГГУ,
Институт биохимии им. Г. Х. Бунятияна НАН РА

А. Г. ВИРАБЯН

Студентка 4-ого курса отделения биологии ГГУ,
кафедра биологии, экологии и
здравого образа жизни ГГУ

М. Г. АРЕВШАТЯН

Студентка 4-ого курса отделения биологии ГГУ,
кафедра биологии, экологии и
здравого образа жизни ГГУ

Нейродегенеративная патология, включающая в себя болезни Альцгеймера, Паркинсона, Гентингтона, различные виды шизофрении

приковывают к себе пристальное внимание исследователей. Убеждение, что важнейшие психические болезни имеют биологическую основу, базируется главным образом на двух источниках: клинические исследования свидетельствуют о роли генетического фактора в подверженности вышеуказанным болезням; результаты исследований относительно воздействия препаратов, имитирующих или подавляющих действие нейромедиаторов мозга, позволяют предполагать, что для многих патологических состояний психики можно найти биологическое объяснение.

MODERN CONCEPTS OF NEURODEGENERATIVE PATHOLOGIES

L. N. ARAKELYAN

*Doctor of Biological Sciences, associate professor, professor of GSU,
H.Buniatian Institute of Biochemistry NAS RA, Yerevan*

A. H. VIRABYAN

*Fourth-year Student of GSU Department of Biology,
GSU Chair of Biology, Ecology and Healthy Lifestyle*

M. G. AREVSHATYAN

*Fourth-year Student of GSU Department of Biology,
GSU Chair of Biology, Ecology and Healthy Lifestyle*

Neurodegenerative pathologies, including Alzheimer's, Parkinson's, Huntington's diseases, various types of schizophrenia have caught the attention of researchers. The belief, that the most mental disorders have biological causes, is based mainly on two sources: clinical studies indicate the role of genetic factors in susceptibility to disease; results of studies on the effects of drugs that mimic or inhibit the action of the neurotransmitters of the brain, suggest, that for many pathological states of mind there is a biological explanation.